ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 29.05.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2019/32

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Լ. Անանիկյանի

Մասնակցությամբ՝
«ԱԼՏԱ ՎԻՊ» ՍՊԸ-ի ներկայացուցիչներ՝ Հ. Ենգոյան

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 29.04.2019թ. թիվ 26/26-1/7036-2019 գրությամբ «ԱԼՏԱ ՎԻՊ» ՍՊԸ-ին (այսուհետ՝ նաև Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ենք ՀՀ պաշտպանության նախարարության 22.04.2019թ. թիվ ՊՆ/02/1/1/326-2019 գրության հիման վրա, 29.04.2019թ. «ԱԼՏԱ ՎԻՊ»

ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

2. <u>ՀՀ պաշտպանության նախարարության կոմիտեի ներկայացրած փաստերը և դիրքորոշումը</u>.

ՀՀ պաշտպանության նախարարությունը 22.04.2019թ. թիվ ՊՆ/02/1/1/326-2019 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

«ՀՀ ՊՆ կարիքների համար «Գնահատման հետ կապված խորհրդատվական» ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-32/2» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգում «ԱԼՏԱ ՎԻՊ» ՍՊԸ-ն գնահատող հանձնաժողովի կողմից ճանաչվել է 1-ին տեղ զբաղեցնող մասնակից: Սահմանված կարգով «ԱԼՏԱ ՎԻՊ» ՍՊԸ-ին www.armeps.am կայքի ոչ ավտոմատ ծանուցման միջոցով ծանուցվել է երեք (3) աշխատանքային օրվա ընթացքում որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը ներկայացնելու վերաբերյալ:

«ԱԼՏԱ ՎԻՊ» ՍՊԸ-ն իր որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը ներկայացրել է օրենսդրությամբ սահմանված ժամկետում, սակայն դրանց մեջ առկա են եղել անհամապատասխանություններ: Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 47-րդ կետը՝ սահմանված կարգով www.armeps.am կայքի ոչ ավտոմատ ծանուցման միջոցով ծանուցվել է «ԱԼՏԱ ՎԻՊ» ՍՊԸ-ին՝ մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

«ԱԼՏԱ ՎԻՊ» ՍՊԸ-ն սահմանված կարգով և սահմանված ժամկետում շտկեց արձանագրված անհամապատասխանությունները, բացառությամբ՝ պայմանագրի պատշաճ կատարման մասով արձանագրված անհամապատասխանությանը:

Գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով Կարգի 48-րդ կետի 2-րդ ենթակետը, որոշեց «ԱԼՏԱ ՎԻՊ» ՍՊԸ-ի հայտը մերժել:»:

3. <u>«ԱԼՏԱ ՎԻՊ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը</u>.

Բողոքներ քննող անձը 30.04.2019թ. գրությամբ դիմել է «ԱԼՏԱ ՎԻՊ» ՍՊԸ-ին ՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 29.04.2019թ. թիվ

26/26-1/7036-2019 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը 15.05.2019թ.-ին ներկայացրած գրավոր դիրքորոշմամբ հայտնել է հետևյալը.

«ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար կազմակերպվել է<<ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-32/2>> ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ:

Վերոհիշյալ ընթացակարգին մասնակցության հայտ է ներկայացրել նաև «ԱԼՏԱ ՎԻՊ» ՍՊԸ–ն և համաձայն 18.03.2019թ. թիվ 6 արձանագրության՝ ճանաչվել առաջին տեղ զբաղեցնող մասնակից:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նույն 18.03.2019թ. տեղի ունեցած նիստի թիվ 6 արձանագրության 1.4 կետի համաձայն հանձնաժողովը որոշեց՝ «ԱԼՏԱ ՎԻՊ» ՍՊԸ-ին առաջարկել ներկայացնել <<ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-32/2>> ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի ՄԱՍ 2-ի 3-րդ կետով նախատեսված փաստաթղթերը՝ <<առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացվող փաստաթղթերը>>:

«ԱԼՏԱ ՎԻՊ» ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետում ներկայացվել են որակավորման փաստաթղթերը, որոնցում գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրվել են անհամապատասխանություններ, մասնավորապես՝

<<Հայտնում ենք Ձեզ, որ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-32/2» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից ուսումնասիրվել են «ԱԼՏԱ ՎԻՊ» ՍՊԸ կողմից ներկայացված որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը, որի արդյունքում արձանագրվել են անհամապատասխանություններ մասնավորապես՝

<<Մասնագիտական փորձառություն>> որակավորման չափանիշը հավաստելու համար ներկայացրել եք 20 հուլիսի 2017թ. կքված նախկինում կատարված պայմանագիր, որի գումարը կազմում է 114 235 560 ՀՀ դրամ և ներկայացրել եք պայմանագրի հաշիվ ապրանքագրերի պատճենները, որի շրջանակներում մատուցված ծառայությունների ծավալը գումարային արտահայտությամբ կազմում է 81 928 302.6 ՀՀ դրամ, ինչը չի համապատասխանում /թերի է/ պայմանագրի ընդհանուր գումարին՝ անհրաժեշտ է հաշիվ ապրանքագրերը ներկայացնել ամբողջությամբ: Ինչպես նաև պայմանագրի պատշաճ կատարումը գնահատելու համար՝ անհրաժեշտ է ներկայացնել /անհրաժեշտ է հստակ ներկայացնել տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը/ տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետում

կատարումը հավաստող ակտի (հանձման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը:

Հիշեցում՝ իր համապատասխանությունը հիմնավորելու համար մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված հայտարարություն, պայմանով, որ առաջին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում սույն հրավերով սահմանված կարգով և ժամկետներում հանձնաժողովին կներկայացնի նախկինում կատարած պայմանագրի (պայմանագրերի) և դրա հաշիվ ապրանքագրերի պատճենները, իսկ այդ պայմանագրի (պայմանագրերի) պատշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը:

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 47-րդ կետը՝ հանձնաժողովը կասեցրել է նիստը և առաջարկում է մեկ աշխատանքային օրվա ընթացքում /08.04.2019թ./ շտկել վերը նշված անհամապատասխանությունները, իսկ շտկված տարբերակը ուղարկել m.hokheyan@mil.am էլեկտրոնային հասցեին>>:

Ի պատասխան գնահատող հանձնաժողովի կողմից անհամապատասխանությունը շտկելու վերաբերյալ 05.04.2019թ. ուղարկված ծանուցման՝ «ԱԼՏԱ ՎԻՊ» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում ներկայացրել է պարզաբանում և կատարումը հավաստող փաստաթուղթ, հետևյալ բովանդակությամբ՝

Տեղեկացնում ենք, որ <<Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշը հավաստելու համար ներկայացրել ենք 20 հուլիսի 2017թ. կնքված նախկինում կատարված պայմանագիր, որի գումարը կազմում է 114.235.560 ՀՀ դրամ ներառյալ ԱԱՀ-ն և ներկայացրել ենք պայմանագրի հաշիվ (ապրանքագրերի պատճենները, որի շրջանակներում մատուցված ծառայությունների ծավալը գումարային արտահայտությամբ կազմում է 81,928.302.6 ՀՀ դրամ, ինչպես նաև մեր կողմից ներկայացված է պայմանագրի կատարումն հավաստող պատվիրատուի կողմից մեզ ուղարկված գրությունը (թիվ 431, 27.04.2018թ.):

Ցանկանում ենք տեղեկացնել, որ պայմանագրում նշված 114.235.560 ՀՀ դրամ ներառյալ ԱԱՀ-ն գումարին և հաշիվ ապրանքագրերով 81.928.302,6 ՀՀ դրամ գումարի տարբերությունը նախատեսված է պայմանագրի դրույթներով, որը արդյունք է փաստացի կատարված աշխատանքի դիմաց վարձատվության չափով, այսինքն պայմանագրով նախատեսված արժեքը կարող է փոփոխվել եթե նախատեսված աշխատանքների ծավալը

փոքրանում կամ ավելանում է: Կարծում ենք վերը նշվածը վրիպել է հանձնաժողովի աչքից, պայմանագիրը անգլերեն լեզվով կազմված լինելու հանգամանքով պայմանավորված:

Խնդրում ենք հիմք ընդունել ներկայացված պարզաբանումը և կից ներկայացվում է պատվիրատուի կողմից աշխատանքների կատարումը հավաստող գրությունը, որում նշված է, որ պատվիրատուն որևէ առարկություն չունի կատարված աշխատանքի վերաբերյալ:

Իսկ այնուհետև Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 10.04.2019թ. տեղի ունեցած նիստի թիվ 7 արձանագրության 1.4 կետի համաձայն՝ հիմք ընդունելով գնահատող հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված գնահատման թերթիկները՝ հանձնաժողովը որոշեց մերժել «ԱԼՏԱ ՎԻՊ» ՍՊԸ-ի հայտը:

ՀՀ Սահմանադրության 86-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ տնտեսական, սոցիալական և մշակութային ոլորտներում պետության քաղաքականության հիմնական նպատակներն են գործարար միջավայրի բարելավումը և ձեռնարկատիրության խթանումը:

<<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի <<ա>> ենթակետը սահմանում է, որ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակ¬ցության դադարեցմանը:

Օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ մասնակիցը պետք է բավարարի հրավերով սահմանված որակավորման չափանիշները: Մասնակիցը պետք է ունենա պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող մասնագիտական փորձառություն:

Ինչպես արդեն հայտնել ենք՝ ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար կազմակերպված <<ՀՀՊՆՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-32/2>> ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին ի թիվս այլ մասնակիցների մասնակցության հայտ է ներկայացրել նաև «ԱԼՏԱ ՎԻՊ» ՍՊԸ-ն և համաձայն 18.03.2019թ. թիվ 6 արձանագրության ճանաչվել առաջին տեղ զբաղեցնող մասնակից:

Այնուհետև Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը նույն 18.03.2019թ. տեղի ունեցած նիստի թիվ 6 արձանագրության 1.4 կետի համաձայն որոշել է՝ «ԱԼՏԱ ՎԻՊ» ՍՊԸ-ին առաջարկել ներկայացնել <<ՀՀՊՆՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-32/2>> ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի ՄԱՍ 2-ի 3-րդ կետով նախատեսված փաստաթղթերը՝ <<առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացվող փաստաթղթերը>>, ինչը «ԱԼՏԱ ՎԻՊ» ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետում ներկայացվել է, սակայն գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրվել են անհամապատասխանություններ, մասնավորապես՝

<<Մասնագիտական փորձառություն>> որակավորման չափանիշը հավաստելու համար ներկայացրել եք 20 հուլիսի 2017թ. կքված նախկինում կատարված պայմանագիր, որի գումարը կազմում է 114 235 560 ՀՀ դրամ և ներկայացրել եք պայմանագրի հաշիվ ապրանքագրերի պատճենները, որի շրջանակներում մատուցված ծառայությունների ծավալը գումարային արտահայտությամբ կազմումէ 81 928 302.6 ՀՀ դրամ, ինչը չի համապատասխանում /թերի է/ պայմանագրի ընդհանուր գումարին՝անհրաժեշտ է հաշիվ ապրանքագրերը ներկայացնել ամբողջությամբ: Ինչպես նաև պայմանագրի պատշաճ կատարումը գնահատելու համար՝ անհրաժեշտ է ներկայացնել /անհրաժեշտ է հստակ ներկայացնել տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը/ տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը:

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Նորոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 47-րդ կետը՝ հանձնաժողովը կասեցրել է նիստը և առաջարկում է մեկ աշխատանքային օրվա ընթացքում /08.04.2019թ./ շտկել վերը նշված անհամապատասխանությունները, իսկ շտկված տարբերակը ուղարկել m.hokheyan@mil.am էլեկտրոնայինհասցեին:

Ի պատասխան գնահատող հանձնաժողովի կողմից անհամապատասխանությունը շտկելու վերաբերյալ 05.04.2019թ. ուղարկված ծանուցման՝ «ԱԼՏԱ ՎԻՊ» ՍՊԸ-ն

սահմանված ժամկետում ներկայացրել է պարզաբանում և կատարումը հավաստող փաստաթուղթ, հետևյալ բովանդակությամբ՝

<<Տեղեկացնում ենք, որ <<Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշը հավաստելու համար ներկայացրել ենք 20 հուլիսի 2017թ. կնքված նախկինում կատարված պայմանագիր, որի գումարը կազմում է 114.235.560 ՀՀ դրամ ներառյալ ԱԱՀ-ն և ներկայացրել ենք պայմանագրի հաշիվ-ապրանքագրերի պատճենները, որի շրջանակներում մատուցված ծառայությունների ծավալը գումարային արտահայտությամբ կազմում է 81,928.302.6 ՀՀ դրամ, ինչպես նաև մեր կողմից ներկայացված է պայմանագրի կատարումն հավաստող պատվիրատուի կողմից մեզո ւղարկված գրությունը (թիվ 431. 27.04.2018թ.):

Ցանկանում ենք տեղեկացնել, որ պայմանագրում նշված 114.235.560 ՀՀ դրամ ներառյալ ԱԱՀ–ն գումարի նհաշիվ-ապրանքագրերով 81.928.302,6 ՀՀ դրամ գումարի տարբերությունը նախատեսված էպ այմանագրի դրույթներով, որը արդյունք է փաստացի կատարված աշխատանքի դիմաց վարձատվության չափով, այսինքն պայմանագրով նախատեսված արժեքը կարող է փոփոխվել, եթե նախատեսված աշխատանքների ծավալը փոքրանում կամ ավելանում է: Կարծում ենք վերը նշվածը վրիպել է հանձնաժողովի աչքից, պայմանագիրը անգլերեն լեզվով կազմված լինելու հանգամանքով պայմանավորված:

Խնդրում ենք հիմք ընդունել ներկայացված պարզաբանումը և կից ներկայացվում է պատվիրատուի կողմից աշխատանքների կատարումը հավաստող գրությունը, որում նշված է, որ պատվիրատուն որևէ առարկություն չունի կատարված աշխատանքի վերաբերյալ:

Սակայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 10.04.2019թ. տեղի ունեցած նիստի թիվ 7 արձանագրության 1.4 կետի համաձայն՝ հիմք ընդունելով գնահատող հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված գնահատման թերթիկները՝ հանձնաժողովը որոշել է մերժել «ԱԼՏԱ ՎԻՊ» ՍՊԸ-ի հայտը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ուշադրությունն ենք հրավիրում այն հանգամանքի վրա, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրված անհամապատասխանությունները սահմանված ժամկետում Ընկերության կողմից շտկվել են, սակայն անհասկանալի պայմաններում ներկայացված «ԱԼՏԱ ՎԻՊ» ՍՊԸ-ի հայտը մերժվել է: Մասնավորապես.

Նախ, անգլալեզո ւպայմանագրում նշված 114.235.560 ՀՀ դրամ ներառյալ ԱԱՀ–և գումարին հաշիվ ապրանքագրերով 81.928.302,6 ՀՀ դրամ գումարի տարբերությունը նախատեսված է պայմանագրի դրույթներով, որը արդյունք է փաստացի կատարված աշխատանքի դիմաց վարձատվության չափով, այսինքն պայմանագրով նախատեսված

արժեքը կարող է փոփոխվել, եթե նախատեսված աշխատանքների ծավալը փոքրանում կամ ավելանում է: Այսինքն ներկայացված պայմանագրի շրջանակներում պատշաճ կատարվել է համապատասխան արժեք ունեցող պատվիրատուի կողմից պատվիրված աշխատանք:

Սակայն եթե նույնիսկ գնահատող հանձնաժողովի կողմից հիմք ընդունվեր ներկայացված պայմանագրի փաստացի կատարված 81.928.302,6 ՀՀ դրամ գումարի դրույթը՝ փաստացի կատարված աշխատանքի դիմաց վարձատրության չափով, ապա նույնիսկ 81,928,302,6 ՀՀ դրամն էր բավարարում հրավերով սահմանված որակավորման պահանջներին (Ընկերության գնային առաջարկը կազմել է 63 360 000 ՀՀ դրամ):

Ինչ վերաբերվում է պայմանագրի պատշաճ կատարումը գնահատելու համար՝ անհրաժեշտ է ներկայացնել պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը, տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը, ապա հայտնում ենք, որ <<ԱԼՏԱ ՎԻՊ>>ՍՊԸ-ի կողմից ներկայացված պարզաբանման հետ միասին ներկայացվել է նաև պայմանագրի կատարումն հավաստող պատվիրատուի կողմից տրամադրված գրությունը (27.04.2018թ. թիվ 431 գրություն):

Գտնում ենք, որ այս պարագայում առկա չէ Ընկերության կողմից <<Գնումների մասին>> ՀՀ օրենսդրության պահանջների խախտում, քանզի տվյալ դեպքում առկա է «ԱԼՏԱ ՎԻՊ» ՍՊԸ-ի կողմից համապատասխան անհամապատասխանությունները շտկելու վերաբերյալ բոլոր ապացույցները:

Ավելին, նշված փաստական հանգամանքների արդյունքում, «ԱԼՏԱ ՎԻՊ» ՍՊԸ-ն ունենալով համապատասխան մասնագիտական փորձառություն, ոչ միայն զրկվել է տվյալ գնման ընթացակարգով հաղթող մասնակից լինելու հնարավորությունից, այլ նաև հայտնվել <<Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում>> ներառվելու վտանգի առջև:»:

Ելնելով վերոգրյալից՝ Բողոքներ քննող անձին խնդրել են հաշվի առնել ներկայացված փաստերը և փաստական հանգամանքները և «ԱԼՏԱ ՎԻՊ» ՍՊԸ-ին չվերագրել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված գնման գործընթացի շրջանակում ստանձնած որևէ պարտավորության խախտում, և վերջինիսի չներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

4. <u>ՍՑ-LO-2019/32 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը,</u>

Սույն գործի փաստերի համաձայն՝

- ՀՀ պաշտպանության նախարարության (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կարիքների համար գնահատման հետ կապված խորհրդատվական ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-32/2» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

- Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել նաև «ԱԼՏԱ ՎԻՊ» ՍՊԸ-ն:

- Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 18.03.2019թ. թիվ 6 արձանագրության 1.3 կետի համաձայն՝ Մասնակիցը ճանաչվել առաջին տեղ զբաղեցնող մասնակից:

- Նույն արձանագրության 1.4 կետի համաձայն՝ «ԱԼՏԱ ՎԻՊ» ՍՊԸ-ին առաջարկվել է ներկայացնել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-32/2» ծածկագրով ընթացակարգի հրավերի մաս II-ի 3-րդ կետով նախատեսված փաստաթղթերը՝ առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացվող փաստաթղթերը:

- «ԱԼՏԱ ՎԻՊ» ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետում ներկայացվել են որակավորման փաստաթղթերը:

- Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 10.04.2019թ. թիվ 7 արձանագրության համաձայն 1.2 կետի համաձայն.

ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԵՁԲ-32/2» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերով նախատեսված պահանջներին «ԱԼՏԱ ՎԻՊ» ՍՊԸ համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերում առկա են անհամապատասխանություններ, մասնավորապես.

«Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշը հավաստելու համար ներկայացվել է 20 հուլիսի 2017թ. կքված նախկինում կատարված պայմանագիր /պայմանագիրը ներկայացվել է անգլերեն լեզվով/, որի գումարը կազմում է 114 235 560 ՀՀ դրամ և ներկայացվել է պայմանագրի հաշիվ ապրանքագրերի պատճենները, որի շրջանակներում մատուցված ծառայությունների ծավալը գումարային արտահայտությամբ կազմում է 81 928 302.6 ՀՀ դրամ, ինչը չի համապատասխանում /թերի է/ պայմանագրի ընդհանուր գումարին: Ինչպես նաև պայմանագրի պատշաճ կատարումը զնահատելու համար՝ անհրաժեշտ է ներկայացնել /անհրաժեշտ է հստակ ներկայացնել տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը/ տվյալ պայմանագրի

կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաս տող ակտի (հանձման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը:

Գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 47-րդ կետը, 05.04.2019թ.-ին կայացված որոշմամբ արձանագրված անհամապատասխանությունների մասին www.armeps.am կայքի ոչ ավտոմատ ծանուցումով տեղեկացրել է «ԱԼՏԱ ՎԻՊ» ՍՊԸ-ին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

«ԱԼՏԱ ՎԻՊ» ՍՊԸ-ն սահմանված կարգով և սահմանված ժամկետում արձանագրված անհամապատասխանությունների վերաբերյալ ներկայացրել է գրություն, որում մասնավորապես նշել է.

«Ցանկանում ենք տեղեկացնել, որ պայմանագրում նշված 114 235 560 ՀՀ դրամ ներառյալ ԱԱՀ-ն գումարի և հաշիվ-ապրանքագրերով 81 928 302.6 ՀՀ դրամ գումարի տարբերությունը նախատեսված է պայմանագրի դրույթներով, որը արդյունք է փաստացի կատարված աշխատանքի դիմաց վարձատվության չափով այսինքն պայամանագրով նախատեսված արժեքը կարող է փոփոխվել եթե նախատեսված աշխատանքների ծավալը փոքրանում կամ ավելանում է...

Խնդրում ենք հիմք ընդունել ներկայացված պարզաբանումը և կից ներկայացվում է պատվիրատուի կողմից աշխատանքների կատարումը հավաստող գրությունը, որում նշված է որ պատվիրատուն որևէ առարկություն չունի կատարված աշխատանքի վերաբերյալ:»:

Մասնակցի կողմից ներկայացված պայմանագրի պատշաճ կատարումը գնահատելու համար՝ ներկայացվել է տվյալ պայմանագրի կատարման գրավոր հավաստումը, որում նշվել է հետևյալը.

«Ի պատասխան Ձեր 25.04.2018թ. թիվ գ/g/04/0151 գրությանը, որին կից ներկայացվել է Հողերի օտարման և տարաբնակեցման ծրագրի (ՀՕՏԾ) հայերեն և անգլերեն թարմացված տարբերակները, տեղեկացնում եմ, որ Պատվիրատուն առարկություններ չունի ներկայացված ՀՕՏԾ-երի վերաբերյալ», որում սակայն նշված չէ այն հանգամանքը, որ Կատարողը պատշաճ կերպով և սահմանված ժամկետներում և ինչ գումարի սահմաններում է մատուցել տվյալ պայամանագրով նախատեսված ծառայությունները: Ինչպես նաև հավաստման մեջ նշված էր 25.04.2018թ. թիվ գ/g04/0151 գրություն, որը չի ներկայացվել «ԱԼՏԱ ՎԻՊ» ՍՊԸ-ի կողմից, ինչը հնարավորություն չի

տվել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՅԲ-32/2» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին հասկանալու և գնահատելու թե խոսքը ինչ գրության մասին է:

- Նույն արձանագրության 1.3 կետի համաձայն՝ 10.04.2019թ. գնահատող հանձնաժողովը հիմք ընդունելով վերոնշյալը և ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 48-րդ կետը՝ որոշել է մերժել «ԱԼՏԱ ՎԻՊ» ՍՊԸ-ի հայտը և գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթաց նախաձեռնելու նպատակով վերջինիս տվյալները ուղարկել ՀՀ ֆինանսների նախարարություն:

- Մասնակցի կողմից ներկայացվել է 2017թ. հուլիսի 20-ին «ՏԾԻԿ» ՊՈԱԿ-ի և «ԱԼՏԱ ՎԻՊ» ՍՊԸ-ի մրջև կնքված թիվ CS/EIB/2/2017 պայմանագիրը, որի գումարը կազմել է 114 235 560 ՀՀ դրամ:

- «ԱԼՏԱ ՎԻՊ» ՍՊԸ-ի կողմից ներկայացվել է 29.08.2017թ.-ին դուրս գրված հաշիվ ապրանքագիրը 19 039 260 ՀՀ դրամի չափով, 13.12.2017թ.՝ 19 039 260 ՀՀ դրամի չափով, 02.05.2018թ.՝ 14 279 445 ՀՀ դրամի չափով և 03.09.2018թ.՝ 29 570 337,6 ՀՀ դրամի չափով, որի ընդհանուր գումարը կազմում է 81 928 302,6 ՀՀ դրամ:

- Մասնակցի կողմից՝ որպես պայմանագրի կատարումն ընդունած կողմի պայմանագրի պատշաճ կատարման գրավոր հավաստում, ներկայացվել է «ՏԾԻԿ» ՊՈԱԿ-ի կողմից 27.04.2018թ. տրված թիվ 431 գրությունը, որի համաձայն՝ *«Ի պատասխան Ձեր 25.04.2018թ. թիվ գ/ք/04/0151 գրությանը, որին կից ներկայացվել է Հողերի օտարման և տարաբնակեցման ծրագրի (ՀՕՏԾ) հայերեն և անգլերեն թարմացված տարբերակները, տեղեկացնում եմ, որ Պատվիրատուն առարկություններ չունի ներկայացված ՀՕՏԾ-երի վերաբերյալ»*:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 29.04.2019թ. թիվ 26/26-1/7036-2019 գրությամբ «ԱԼՏԱ ՎԻՊ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է բավարարման, հետևյալ պատճառաբանությամբ.

Այսպես՝

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ մասնակիցը պետք է բավարարի հրավերով սահմանված որակավորման չափանիշներին: Մասնակիցը պետք է ունենա պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող մասնագիտական փորձառություն:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 43-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտից հետո ոչ ուշ քան հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, բացառությամբ սույն կարգով նախատեսված դեպքերի, ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը, իսկ բանկային երաշխիքի ձևով ներկայացված հայտի ապահովման բնօրինակը՝ կից գրությամբ: Սույն մասով սահմանված ժամկետում փաստաթղթեր ընդհանրապես չներկայացվելու դեպքում հանձնաժողովը հայտերի գնահատման նիստում մերժում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Կարգի 46-րդ կետի համաձայն՝ սույն կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետով նախատեսված ժամկետի ավարտին հաջորդող աշխատանքային օրը քարտուղարն էլեկտրոնային եղանակով հանձնաժողովի անդամներին միաժամանակ տրամադրում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերի պատճենները, գնահատման թերթիկների երկուական օրինակ և կոմիտեից ստացված տեղեկատվությունը: Հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստը հրավիրվում է ոչ ուշ, քան փաստաթղթերը հանձնաժողովի անդամներին տրամադրվելուն հաջորդող երրորդ աշխատանքային օրը: Ընդ որում, ապրանքների գնման դեպքում հանձնաժողովը գնահատում է նաև ներկայացված տեխնիկական բնութագրերի համապատասխանությունը հրավերի պահանջներին, իսկ անհամապատասխանություն արձանագրելու դեպքում հանձնաժողովի նիստի արձանագրության մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

Կարգի 47-րդ կետի համաձայն՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթերն ամբողջական չներկայացվելու, ինչպես նաև ներկայացված՝ ներառյալ կոմիտեի կողմից տրամադրված որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի, իսկ ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթղթի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը…:

Կարգի 48-րդ կետի համաձայն՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում՝

1) շտկելու դեպքում հայտը գնահատվում է բավարար և առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից.

2) չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է, և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Վերոնշյալ իրավակարգավորումների վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը հանգում է այն հետևության, որ մասնակիցը պետք է բավարարի հրավերով սահմանված որակավորման չափանիշներին՝ ունանալով մասնագիտական փորձառություն, որի առկայության (համապատասխանության) դեպքում է հնարավոր հայտը գնահատել հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Այն դեպքում, երբ հայտերի բացման նիստի ավարտից հետո էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցված առաջին տեղն զբաղեցրած մասնակցի ներկայացրած որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը ներկայացվել են ոչ ամբողջական կամ դրանց գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ արձանագրվել են անհամապատասխանություններ, ապա հանձնաժողովի քարտուղարը կրկին անգամ էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:

Արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում՝

1) շտկելու դեպքում հայտը գնահատվում է բավարար և առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից.

2) չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է, և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Կարգի 61-րդ կետի համաձայն՝ մասնակիցների՝ օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով նախատեսված՝ «Մասնագիտական փորձառություն» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

1) հրավերով պահանջվում է, որ մասնակիցը հայտով ներկայացնում է հայտարարություն, որ հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրել է համանման (նմանատիպ) առնվազն մեկ պայմանագիր: Նախկինում կատարված պայմանագիրը (կամ պայմանագրերը) գնահատվում է (կամ գնահատվում են) նմանատիպ, եթե դրա (դրանց) շրջանակներում մատակարարված ապրանքների, մատուցված ծառայությունների և կատարված աշխատանքների ծավալը (կամ հանրագումարային ծավալը)՝ գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից, որից առնվազն մեկ պայմանագրի շրջանակներում մատակարարված ապրանքների, մատուցված ծառայությունների և կատարված աշխատանքների ծավալը գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի քսան տոկոսից.

2) առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը, որպես սույն կետի 1-ին ենթակետով սահմանված որակավորման չափանիշը հիմնավորող փաստաթուղթ, ներկայացնում է նախկինում կատարած պայմանագրի (պայմանագրերի) և դրա հաշիվ-ապրանքագրերի պատճենները, իսկ այդ պայմանագրի (պայմանագրերի) պատշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձնման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը.

3) եթե գնման առարկայի նախահաշվային գինը տվյալ ընթացակարգի շրջանակում չի գերազանցում գնումների բազային միավորի հնգապատիկը կամ գնման առարկա է հանդիսանում անշարժ գույքը կամ գնման ընթացակարգը կազմակերպվում է սույն կարգի 23-րդ կետի 5-րդ ենթակետի «գ» պարբերությամբ նախատեսված հիմքով, ապա սույն կետի 1-ին և 2-րդ ենթակետերով նախատեսված պահանջները չեն սահմանվում հրավերով, և մասնակիցը հայտով ներկայացնում է միայն հայտարարություն համանման (նմանատիպ) պայմանագրի կատարման փորձառություն ունենալու մասին.

4) մասնակցի որակավորումը գնահատվում է բավարար, եթե վերջինս ապահովում է սույն կետով նախատեսված պահանջները: Վերոնշյալ նորմերի համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ մասնակիցների «Մասնագիտական փորձառություն» չափանիշը գնահատելու համար մասնակիցը հայտով ներկայացնում է հայտարարություն, որ հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրել է համանման (նմանատիպ) առնվազն մեկ պայմանագիր:

Վերոնշյալ դրույթների համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ մասնակիցների «Մասնագիտական փորձառություն» չափանիշը գնահատելու համար մասնակիցը հայտով ներկայացնում է հայտարարություն, որ հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրել է համանման (նմանատիպ) առնվազն մեկ պայմանագիր:

Ընդ որում նախկինում կատարված պայմանագիրը գնահատվում է նմանատիպ, եթե դրա շրջանակներում մատակարարված ապրանքների, մատուցված ծառայությունների և կատարված աշխատանքների ծավալը՝ գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում նշել, որ Կարգի 61-րդ կետի դիսպոզիցիայից (բովանդակությունից) ուղղակի հետևում է, որ «նմանատիպ պայմանագիր» եզրույթն իրենից ներկայացնում է երեք կարևոր միաժամանակյա վավերապայմանների առկայություն, դրանք են՝

1. Պայմանագիրը պետք է կատարված լինի հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում,
2. Պետք է կատարված լինի պատշաճ ձևով,
3. Գումարային արտահայտությամբ, չպետք է պակաս լինի տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից և առնվազն մեկ պայմանագրի շրջանակներում մատակարարված ապրանքների, մատուցված ծառայությունների և կատարված աշխատանքների ծավալը գումարային արտահայտությամբ, չպետք է պակաս լինի տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի քսան տոկոսից:

Սույն գործի փաստերի հիման վրա, Բողոքներ քննող անձը փաստում է, որ 2017թ. հուլիսի 20-ին «ՏԾԻԿ» ՊՈԱԿ-ի և «ԱԼՏԱ ՎԻՊ» ՍՊԸ-ի միջև կնքված թիվ CS/EIB/2/2017 պայմանագրի գումարը կազմել է 114 235 560 ՀՀ դրամ, որից՝ ըստ ներկայացված

համապատասխան հաշիվ ապրանքագրերի փաստացի մատուցվել է 81 928 302,6 ՀՀ դրամի ծառայություն:

Ինչպես նաև Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելել, որ Մասնակցի կողմից ներկայացված «ՏԾԻԿ» ՊՈԱԿ-ի կողմից 27.04.2018թ. տրված թիվ 431 գրությամբ չի նշվել այն, որ «ԱԼՏԱ ՎԻՊ» ՍՊԸ-ի կողմից պատշաճ կերպով և սահմանված ժամկետներում է մատուցվել պայմանագրով նախատեսված ծառայությունը:

Անդրադառնալով Ընկերության այն պնդմանը, որ *«պայմանագրում նշված 114 235 560 ՀՀ դրամ ներառյալ ԱԱՀ-ն գումարի և հաշիվ-ապրանքագրերով 81 928 302.6 ՀՀ դրամ գումարի տարբերությունը նախատեսված է պայմանագրի դրույթներով, որը արդյունք է փաստացի կատարված աշխատանքի դիմաց վարձատվության չափով, այսինքն պայամանագրով նախատեսված արժեքը կարող է փոփոխվել եթե նախատեսված աշխատանքների ծավալը փոքրանում կամ ավելանում է...»*, Բողոքներ քննող անձը արձանագրում է, որ Կարգի 61-րդ կետի 1-ին ենթակետի պահանջն է ոչ թե ներկայացնել նախկինում կատարած պայմանագիր, այլ ներկայացնել նախկինում պատշաճ կատարած պայմանագիր:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը.

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ)՝ 32-րդ կետի 1-ին ենթակետի «բ» պարբերության համաձայն՝ մասնակիցը հայտով ներկայացնում է ... իր կողմից հաստատված հայտարարություն՝ հրավերով սահմանված մասնակցության իրավունքի և որակավորման չափանիշներին իր համապատասխանության մասին:

Նույն կետի 20-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու և (կամ) որակավորման չափանիշները բավարարելու մասին հայտով ներկայացված հայտարարությունները որակվում են որպես իրականությանը չհամապատասխանող կամ մասնակիցը կամ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Վերը նշված դրույթների վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը փաստում է, որ մասնակիցը պարտավոր է ներկայացնել հրավերով սահմանված մասնակցության իրավունքի և որակավորման չափանիշներին իր համապատասխանության մասին հավաստող՝ իր կողմից հաստատված հայտարարություն (այսուհետ՝ Հայտարարություն): Եվ եթե Հայտարարությունը որակվի որպես իրականությանը չհամապատասխանող կամ մասնակիցը կամ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չներկայացնի հրավերով նախատեսված փաստաթղթերը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորության խախտում: Նման դեպքում առաջանում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի դրույթների կիրառման անխուսափելիությունը, քանի որ Մասնակիցն իր գործողություններով կամ անգործությամբ, խախտելով գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, հանգեցնում է գնման գործընթացին հետագա մասնակցության դադարեցմանը:

Վերը շարադրվածից ելնելով՝ մասնակիցը պետք է ընդգրկվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, քանի որ խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը՝ ներկայացնելով հրավերով սահմանված մասնակցության իրավունքի և որակավորման չափանիշներին իր համապատասխանության մասին հավաստող՝ իր կողմից հաստատված իրականությանը չհամապատասխանող հայտարարություն:

Նշվածով պայմանավորված՝ Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ մասնակցության իրավունքի և որակավորման չափանիշների մասին իրականությանը չհամապատասխանող հայտարարություն ներկայացրած անձինք գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն, ու այդ դեպքում մասնակիցը պետք է ընդգրկվի գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ երկու տարի ժամկետով:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «ԱԼՏԱ ՎԻՊ» ՍՊԸ-ն, Պատվիրատուի կողմից սահմանված շտկման ժամանակահատվածում չներկայացնելով իրեն ներկայացված պահանջների համապատասխանության հիմնավորման նպատակով լրացուցիչ այլ փաստաթղթեր, տեղեկություններ, նյութեր կամ պայմանագրի պատշաճ կատարումը հավաստող այլ ապացույցներ, չի բավարարել Օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով սահմանված պահանջներին, դրանով իսկ խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որն հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով, 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 29.04.2019թ. թիվ 26/26-1/7036-2019 գրությամբ «ԱԼՏԱ ՎԻՊ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել:

2. «ԱԼՏԱ ՎԻՊ» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ երկու (2) տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝

ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ